

Հ Ա Խ Հ
Ը Թ Փ Ո Ղ Կ Ո Մ Ա Տ

Բժ. Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

ԲՆԱԿԱՐԱՆԸ

ՅԵՎ ՄԵՐ

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

ՍԵՆ-ԼՈՒ
ԳՐԱԴԱՐԱՆ

No 1

613.5
7-15

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1929

29 JUL 2010

ՀԱՅՀ ԱԹ-ՁՈՂԿՈՒՄԱՏ

№ 1 ՍԱՆ-ԼՈՒՍՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 1

Արշակ

ԲԺ. Ա. ՂԱԶԱՐԵԱՆ

613.5

Հ-15

ահ

ԲՆԱԿԱՐԱՆԸ

ՑԵՎ

ՄԵՐ ԱՌԱՋԱՀԱՅՐԱԿՈՒՆԸ


ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԿԳՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐԵԱԿԱՆ - 1929

07 JUL 2013

2318

31922-42



(Ч5863км)

15726-58

Հրատ. № 1093

ՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՐՈՒ ՏՊԱՐԱՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Դրամի. № 2812(բ) Տերաֆ 3.000 Պատվ. 1088



(8459-5)

I. ԲՆԱԿԱՐԱՆԸ ՏԵՎ ՄԵՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

Բնակարաները յեզ Շատ հին ժամանակներուց եօն մարդը միշտ ել կարուեք ուրք ե զգացել պաշտպանվելու ցրտից, քամիներից, արեի ալրող ճառագալթներից, ¹ անձրևից, այլև վայրի կենդանիներից ու թշնամիներից:

Նախնական մարդը շատ քիչ ե տարբերվել իր շրջապատից. Նրա ապաստարանը հանդիսացել են քարայրերը կամ մեծ ծառերի խոռոչները, ուր գիշերել ե և վտանգների ժամանակ պաշտպանվել.

Յերբ նախնական մարդը նստակաց ե դարձել և սկսել ե պարապել հողագործությամբ, այն ժամանակ ել նաև սկսել ե կառուցել իր համար բնակարաններ:

Նախնական բնակարանները ներկայացնում եյին գանազան ձեւի գետնափորներ, վորոնք մի անցք ունելին, վորտեղից մտնուժ-դուրս ելին գալիս, և մեկ ել ներս եյին թափանցում լուսի թուլլ ճառագալթները: Դարերի^{*}) ընթացքում մի-

*.) Դարը հարյուր տարին ե:

այն մարդը կարողացավ կատարելագործել իր բնակարանները։ Այսոր շնորհիվ զիտության ու տեխնիկայի զարդացման, մարդիկ կառուցում են բոլոր հարմարություններով հսկա շենքեր ու պալատներ։

Ներկայիս բնակարանները զանազան ձևի են, ըստ շինանյութերի ու տեղի կլիմայական պայմանների։ Տաք ու մեղմ կլիմա ունեցող յերկրներում, որինակ՝ Աֆրիկայում բնակարանները շինում են ծառերի ճյուղերից, Յապոնիայում՝ բամբուկից, Ֆինլանդիայում՝ գրանիտից, Ամերիկայում՝ բետոնից ու յերկաթից, Կովկասյան քաղաքներում՝ տեղական քարից ու աղյուսից, իսկ գյուղում՝ փայտից ու հողի ծեփվածքից։

Ենք չնայած ներկայիս կապիտալիստական յերկրների շինարարական տեխնիկայի հսկայական զարգացման, այնուամենանիվ, ազգաբնակության խոշոր տոկոսը, մանավանդ աշխատավոր մասսաները, ապրում են միանգամայն հակառակողջապահական պայմաններում։ Նույնիսկ մեծ քաղաքներում կան հազարավոր թափառաշրջիկներ, վորոնք զուրկ են բնակարաններից և զիշերում են բացովթյան փողոցներում, կայարաններում, հասարակական ալոփիներում և այլն։

Կապիտալիստական իրավակարգում տունը

դարձել է մի տեսակ բերդ։ Բուրժուազիան և ուներներն իրենց բնակարանները շինում են առանձնացած, հարմարեցրած իրենց ճաշակին ու պահանջներին, ուր մթերում են իրենց հարստություններն ու բնության բարիքները, զարդարում թանգարժեք սարքուկարգով կահկարասիներով, նկարներով ու արձաններով. պահում են բազմաթիվ ծառաներ, այնինչ աշխատավորության ճնշող մեծամասնությունն իր դոյությունը քաշը ե տալիս գետնափորներում, մութ ու խավար ներքնահարկերում, զուրկ տարրական հարմարություններից։

Մեծ արդյունաբերական քաղաքներում, ուր բանվորության թիվը խոշոր է, զգացվում ե բնակարանային մեծ տագնապ, մարդիկ ապրում են խտացած, մեծ խմբերով ու մեկը մյուսի վրա թափված։

Բնակարանային նեղվածությունն առանձնապես զգալի լե մեծ պատերազմից հետո, յերբ ազգաբնակության աճումը մեծ չափեր ընդունեց մեծ քաղաքներում, ուր բանվորական խոշոր զանգվածներ կուտակվեցին։

Դրա համար ել լեվրոպական յերկրներում բնակարանային խնդիրը սուր բնությ և ստացել և միաժամանակ անցել ե պետական խոշորագույն հարցերի շարքը։

Բնակարանային հարցինշանակությունը մեծ է մանավանդ այն պատճառով, վոր նրա հետ ե կապված ազգաբնակության տռողջությունը:

Կյանքի փորձից գիտենք, վոր կապիտալիստ դասակարգը սակավ ե հիվանդանում նրա համար, վոր նա բարեկեցիկ ե, ապրում ե լուսավոր, ընդարձակ ու ամեն հարմարություններ ունեցող բնակարաններում:

Վիճակագրությունը ցույց ե տալիս, վոր վատ ու հարմարություններից զուրկ բնակարաններում հիվանդություններն ու մահացությունները միքանի անգամ ավելի բարձր են, քան հարուստ հարմարություններ ունեցող բնակարաններում: Պատերազմից առաջ, որինակ, Աւանդությունների թիվը 1000-ին 15 եր, այնինչ բանվորական վայրերում 50: Ոգեստայում 14-ի գիմաց 62 եր. Լայպցիգում շնչին մի սենյակ ունեցող 1000-ից մահանում են 14-ը, իսկ յերեք շնչին մի սենյակ ունեցողներից՝ 36:

Թորհրդակին չալաստա-
նակարանային առա-
նության պատճառում
հայ-վիրական, հայ-թաթա-
ստական և հայ-թյուրքական, ինչպես և քաղաքա-
ցիական կոիզմերի հետևանքով, բնակարանալին

խիստ տագնաապ ե ապրում: Մանավանդ բնակարանային տագնաապը մեծ ե Յերևանում և Լենինականում, ուր շնորհիվ խորհրդակին արդյունաբերությունն խիստ ծավալման, ազգաբնակության աճումը համեմատաբար արագ ե տեղի ունենում: Յերևանը, վոր նախապատերազմյան շրջանում ուներ միայն 25-30 հազար ազգաբնակչություն, այժմ ունի մոտ 80 հազար և որը-որին ել ավելի յե բազմանում: Նման բացառիկ աճման ժամանակ, բնականաբար, վոչ մի շինարարություն, վորքան ել մեծ լինի նրա տեմպը, չի կարող գոհացնել ազգաբնակության մինիմալ պահանջները: Դրա համար ել բնակարանային տագնաապը մեզ մոտ խիստ զգալի յե:

Գյուղական վայրերում բնակչության բարձըր աճման զուգընթաց վատթար են բնակարանային պայմանները: Մեր գյուղական խրճիթները հանդիսանում են մեծ մասով հին տիպի գետնափորներ, վորոնք իրենց կառուցվածքով մեծ տարբերություն չեն ներկայացնում կունունիան ցըանի հողակույցերից:

Այնպես վոր գյուղի աշխատավորությունը կանգնած ե կրկնակի աշխատանքների առաջ. նա վոչ միայն նոր կենցաղին հարմար ժամանակակից բնակարանների կառուցմամբ պիտի ըզբաղվի, այլ և մեծ ինսամք պիտի տանի լեղած-

Ները բարեկարգ ու մաքուր պահելու համար: Մենք գիտենք, վոր հսկմարություններ ունեցող ջնդերը ևս կարող են մեր առողջապահության համար վտանգավոր գառնալ, յեթե չգիտենք նրանց պահպանել այսպիս, ինչպես պետք են. կամ թե ընդհակառակը՝ վատ պայմաններ ունեցող բնակարանները կարող են քիչ վտանգավոր գառնալ, յերբ նրանց վրա հարկավոր խնամք թափվի և մաքուր պահպեն:

Բնակարաններն առաջ-
ռնակառանք յեզ վա-
րակիչ հիվանդու-
րյունները

նակարգ գեր են կատա-
րում մեր առողջապահու-
թյան գործում: Հիվանդու-
թյուններ կան, վորոնք բացառապես զարգանում
են բնակարանային վատթար պայմաններում: Այս-
պիսի հիվանդությունների շարքին են պատկա-
նում ամենից առաջ վարակիչ հիվանդությունները, վորոնք, ինչպես գիտենք, առավելապես զարգանում են մութ, խոնավ ու գետնափոր բնակարաններում, ուր մեծ թվով մարդիկ են ապրում: Նման բնակարանները հանդիսանում են վարակի բներ, քանի վոր նրանց մշտական կեղտն ու նեղվածությունը պարարտ հող են ներկայացնում մանրեների (միկրոբների) շարու-նակական գոյության և զարգացման համար:

Բծավոր ու անզրադարձ տիֆը, վորոնք

կոչվում են աղքատության հիվանդություններ, իրենց մեծ հունձն անում են չքափորության մեջ, քանի վոր չքափոր մարդկանց բնակարա-նացին սեղմ ու վատթար պայմանները թույլ չեն տալիս աշխատավորության ազատվել մի-ջատներից, իսկ այդ հիվանդություններն, ինչ-պես հայտնի յե, միջատների միջոցով են տա-րածվում:

Վորովայնի տիֆը, վորի վարակը գտնվում ե հիվանդի արտաթորությունների, սեղի և թքի մեջ, հեշտությամբ համաճարակի յե փոխվում բանվորության և աղքատ թաղամասերում, ուր առողջներն ու հիվանդները շատ հաճախ միե-նում բաժակով են ջուր խմում և միենույն գդալով ուտում, ուր արտաքնոցներն ընդհանուր են և պահպում են աղտոտ, իսկ յերբեմն և ուղ-ղակի չկան: Մեզանում հատկապես այդ նպա-տակով պետք ե պայքար տանել, կամպանիայի և այլ սիջոցների կորգով, առողջապահական ալդ տարրական սիջոցի համար:

Բերլինում, այն բնակարաններում, ուր ապ-րելիս են յեղել 97 հոգի, վորովայնի տիֆից մեռել են 30 հոգի, 90 հոգի ունեցող բնակարա-նում 20, այնինչ 50 հոգի ունեցողները միայն տալիս են 5 մահացություն:

Խիս բնակությունները տալիս են մեծ մա-հացություններ,

Բնակարանային վատթար պայմաններում, բնական ե, հիվանդություններն արագությամբ համաճարակների լեն վորխվում և լայն ծավալ ստանում, մինչդեռ հարուստ տներում այդ հիվանդությունները հազվագյուտ են, և պատահած դեպքերում ել հնարավորություն կա անմիջապես մեկուսացնելու:

Խոլերայի համաճարակն անենից շատ հարվածում ե նորից ազգաբնակության անտուն և աղքատ խավին: Նույն բանը կարելի լե ասել նաև դիֆտերիտի, քութեշի, գրիպուի և այլ վարակիչ հիվանդությունների մասին:

Բնակարանային պայմանագիրը ԱԵՎ Բիրկ հիվանդություն պիտի համարել բուժախոր: Վորովհետև խոնավ, արեի ճառագալթներից զուրկ, աղքատ ու սեղմ բնակարաններում, ուր մեծ թվով ընտանիքներ են ապրում, նման վայրերում թոքախտը դյուրությամբ ե զարգանում, նամանավանդ, յերբ ազգաբնակությունն անգրագետ ե առողջապահական գիտելիքների մեջ, լեռը ընտանիքի լուրաքանչչուր անդամ, հիվանդ թե առողջ, ազատորեն թքում ե գետնին, իսկ թուքը չորանալով, նրա մեջ պարունակվող թոքախտի մանրեները, փոշու միջոցով, շնչում են ընտանիքի առողջ անդամները և վարակվում:

Լոնդոնի այն թաղամաններում, ում ազգաբնակության խտությունը միայն 10 տոկոս ե, այնտեղ 10.000 հոգուն ընկնում ե թոքախտի 12 մահացություն, իսկ բանվորական ավելի խիտ թաղամաններում՝ 3%:

Բնակարանային պայմանների լավանալով պակասում են մահացությունները,

Յերբ Պարիզում հիմնական վերանորոգման լենթարկեցին մի շարք բնակարաններ, վորոնք աչքի ելին ընկնում առանձնապես հակառաղջապահական վատթար պայմաններով, թոքախտավորների մահացություններն այդ շենքերում 71/2-ից ի շնուռ են 5-ի:

Թոքախտավորների թիվը Հայաստանում զգալի տոկոս ե կազմում: Հիվանդների մեծ տոկոսը տալիս են մեծ քաղաքներն ու արդյունաբերական վայրերը, ուր մահացությունները համեմատաբար մեծ են: Հայաստանում յուրաքանչյուր 10.000-ին ընկնում ե՝ 26 թվին՝ 86,2, 27 թ.՝ 97,8 և 29 թ.՝ 112,3 թոքախտավոր: Յերևանի գավառում 128 թոքախտավորներից, 28 թվին, մեռել են 19-ը, վորը պիտի համարել բարձր թիվ:

Բնակարանային վատթար պայմաններին դուգընթաց կան շատ այլ կարևոր ազգակներ, վորոնք նպաստում են հիվանդությունների տա-

բածման, ինչպես, որինակ՝ վատ ու անբավարար սնունդը, աշխատանքի ծանրությունը, վատ հադուստը և այլն:

Խփօ բնակություն-
եւր

Խիտ բնակությունները
պատճառ են լինում մեր
բնակարանների անմաք-

րության: Յերբ մարդիկ թափված են մեկը մյուսի վրա, յերբ մի սենյակում, վորի ծավալը կարող է բավարարել միայն յերկու հոգու, ապ-
րում են 5 և ավելի, հասկանալի յե. վոր նման բնակարանները մեր առողջության համար հան-
դիսաւում են խոշոր չարիք:

Նեղվածությունն ու մարդկանց կուտակու-
մը թույլ չեն տալիս սենյակները հարկավոր ու
պահանջված մաքրության մեջ պահպանել. ամեն ինչ այնտեղ թափթփած է ու աղտոտ. փոշին
ու ողի ապականությունը սովորական յերեսութ-
ներ են նման բնակարաններում: Մարդիկ փո-
խանակ թախտերի և մահճակալների վրա պառ-
կելու, քնում են հատակներին: Յեզ վորքան
մեծ ե ընտանիքի թիվը, անքան հավիտենական կեղտն ու փոշին հաստ շերտերով են նստած
սենյակների պատերին ու հատակին: Նման բնակարաններում վիստում են զանազան միջաւ-
ներ ու ճանճեր. բնակիչներն իրենք ես կորած
են կեղտի մեջ. աղտոտ են նրանց մարմինը,

հագուստը, անկողինը, կերակուրները... Յեվայս
ամենի հետեւանքը, պարզ է, բազմապիսի հիվան-
դություններն են:

Քուը և մաշկի այլ հիվանդությունները
տարածված են ազտոտ ու խիտ բնակություն-
ներում:

Սկսության ու կերտի մեջ են բազմա-
նում հանները, վերոնի լավագույն միջնորդներն
են հիլանդությունների տարածման:

Ո գ բ Յերբ մի սենյակում հարկա-
վոր թվից ավելի մարդիկ են ապրում, այնտեղ
ողը ծանրանում ե ու ապականվում: Մենք փոր-
ձով գիտենք, վոր ժողովարահում, ուր մեծ
թվով մարդիկ են կուտակվում, այնտեղ ողը
ծանր է լինում, և մարդիկ դժվարությամբ են
շնչում: Դա նրանից ե, վոր խեղդված բնակա-
րանի ողի մեջ թթվածինը պակասում ե, իսկ
ածխաթթուն, վոր արտաշնչում ենք, շատանում:

Թարմ ողը հարուստ է թթվածնով, իսկ
թթվածինն անհրաժեշտ է մեր մարմնի համար,
վորովհետև շնչառության միջոցով նա մանում ե
մեր թոքերը, այնտեղ միանում է մեր արյան
կարմիր գնդակիկների հետ և արածվում է
մեր մարմնի զանազան հյուսվածքներում, ուր
առաջ ե բերում ալրումներ, վորից և կախված
ե մեր մարմնի տաքությունը. այնինչ ածխա-

թթուն, վորպես թունավոր գազ, վնասակար ե, և նրանով հարուստ ողի մեջ մարդիկ լերկար չեն ապրում, մեռնում են:

Մեր շնչառությունից խոնավանում ու ատաքանում ե սենյակի ողը. իսկ նման ողը վնասակար ե մեր առողջության համար, քանի վոր խոնավ ու տաք ողը դժվարացնում ե մեր մաշկի շնչառությունը և արգելը ե հանդիսանում մեր քրտնքի գոլորշիացման:

Խոնավ բնակարաններում ողը ծանր ե լինում, վորովնետև խոնավության ու տաքության մեջ գյուրությամբ են տեղի ունենում փտումներ.

Անմաքուր ու բազմամարդ բնակարանների ողը, բացի թթվածնի սակավությունից, ծանրանում ենակ վատ հոտ ունեցող գազերով, վորոնք առաջանում են քրտնքից, մարմին ճարպի փտումներից, քրտնքով ու ճարպով հագեցած լաթերից ու հագուստներից և այլն: Այդ բանը դուք զգում եք, յերբ թարմ ողից մտնում եք ապաստարանները, ուր գիշերում են թափառաշրջիկների ու աղքատ խավից մեծ զանգվածներ: Ապականված ու նեխված ողից պտտվում ե ձեր գլուխը, և անհնար ե յերկար մնալ այստեղ: Վոչ միայն թթվածնի պակաս եք զգում, այլև ողը հագեցած ե բազմաթիվ թունավոր գազերով:

Խիտ բնակարանների բնակիչները, ուր ողն

ապականված ե, լինում են սովորաբար սակավաբուն, ունենում են գլխացավ, գլխապտույտ, սրտի խառնոց: Ծանր դեպքերում տեղի չեն ունենում ուշագնացություններ ու անգամ մահացություն: Առանձնապես ծանր ե անչափահաս յերեխաների զրությունը. նրանք լինում են թուլակազմ, գունատ ու նիհար, յենթակա հաճախակի հիվանդությունների: Անզարգացած ու նվազ են մնում նրանց մարմինի մասերը, սովորաբար ծուռ վոտներ են ունենում, սեղմված ու նեղ կուրծք, թուլ թոքեր. այդպիսի յերեխանները թոքախտի լավագույն թեկնածուներ են:

Գիտության տված նորմայով՝ բնակելի տներում յուրաքանչյուր հոգուն պիտի յերեք քառակուսի սաժեն ող: Որինակ՝ մի սենյակում, վորն ունի 4 արշին բարձրություն, 4 արշին լայնություն և 5 արշին յերկարություն, կարող նն ապրել վոչ ավելի յերեք հոգուց:

Բնակարանների ողը փշանում ե, յերբ աղտոտ են պահում բակը, տների շրջապատը, ուր թափված են կերակուրների մնացորդներ, յերկար ժամանակ մնում ե կուտակված աղը, վորոնք փտումներ են առաջ բերում և ապականում շրջապատի ողը: Այդպիսի պայմաններում վորքան ել հաճախակի ողափոխություն կատարվի, այնուամենայնիվ բնակարանների ողը մաքուր լինել չի կարող:

Բնակարանների ողն ապականվում են նաև վատ պահփող արտաքնոցներից ու աներին կից գտնվող անմաքուր գոմերից, ուր պահում են կենդանիներ, կամ յերբ կերակուրը պատրաստում են բնակարաններում, ուր և քնում են:

Փոշի 6 Բայց բնակարանների ողն ամենից շատ փչանում են փոշուց, զորք բերում են դրսից կոչիկների յեվ հագուսի վրա, յեթե նախապես մարդիկ չեն մաքրվում ու ապա նոր սենյակ մտնում.

Փոշին առանձնառես վասնգավոր են նրանով, զոր նա առհասարակ հարուստ են մանրեներով, զորոնք առաջ են բերում զանազան հիվանդություններ, յերբ շնչում են մարդիկ: Կանաչ դաշտերում ու անառաներում ողը միշտ ել մաքուր եւ ու թարմ, հարուստ թթվածնով, այնինչ մեծ քաղաքներում, ուր բազմաթիվ դորժարաններ կան, ողը ծանրաբեռնվում են զանազան տեսակի փոշիներով, զորոնց վրա ավելանում են նաև աղտոտ բնակարանների մանրեներով վարակած ողը:

Թոքախտիտարածման դլխավոր միջոցներից մեկն ել փոշին ե, զորի մեջ զտնվում են մանրեներ: Դրա համար ել կուլտուրապես բարձր ժողովուրդները մեծ ուշադրություն են դարձնում և պայքար մղում փոշու դեմ: Նրանք խստիվ ար-

գելում են փողոցներում և հասարակական վայրերում թքելը: Շատ յերկրներում թքողներին տուգանում են և հանցագործ համարում, վորովինետեւ նրանց թուքը չորանում եւ խառնվում փոշու հետ, և յերբ շնչում են առողջները, ողի հետ այդ փոշին մտնում են նրանց թոքերը և այնաեղ առաջ երերում բորբոքումներ: Այդ բանը դուրսութիւններ եւ տեղի ունենում, յերբ շնչում են փոշու այնպիսի մասնիկներ, զորնք սրածալը են լինում և առաջ են բերում ճանակրովածքներ շնչափողի կամ թոքերի մեջ:

Համոզվելու համար, թե մարդիկ ողի հետ շնչում են խոշոր քանակութիւններ փոշի, դիմում են փորձի, անդամահատության են յենթարկում, որինակ, պատահարներից մեռած ածխահանքերի բանվորների դիմակները և նրանց թոքերում գտնում են ածխի բազմաթիվ մասնիկներ. յերբեմն այնքան մեծ ել լինում նրանց քանակը, զոր կարելու ժամանակ դանակի տակ ձախներ են հանում:

Բննություններցուց ետվել, զոր խիտ ու աղքատ բնակարանների ողը ալարունակում են զգալի տոկոս թոքախտի, զիֆաերիտի, քութեշի, թոքերի բորբոքման և այլ հիվանդությունների մանրեներ: Հետևապես շարունակ շնչելով նման վարակված ող, մարդիկ չեն կարող առողջ մնալ:



Ամենից շատ տուժում են յերեխաները և կանալք, վորոնք ընդհանուր առմամբ փակ կանք են վարում և քիչ հնարավորություն ունեն թարմողի մեջ գտնվելու։ Դրա համար ել հաճախակի ու լուրջ հիվանդացողները լինում են յերեխաները և կանալք։

Բնական լուսավորություն կոյության անհրաժեշտ նախապայմաններից մեկն ել արևի լույսն եւ Ասված ե՝ առանց լուսի չկա գոյություն։ և դա ճիշտ ե։ Վորպեսզի մարդկացին կրանքը կանոնավոր զարգանա և առողջ լինի պիտի վոր մեր բնակարանները բավականաչափ լույս ունենան, և արևի ճառագալթներ թափանցեն։

Արեվի հառագայթները վոչնչացնում են բոլոր վնասառուներին, վորոնք կարող են վահագել մեր առողջությունը։

Բոլոր մանրեները չեն դիմանում արևի անմիջական լուսին, ամենն ել վոչնչանում են։

Հետեապես վորքան լուսառատ լինեն մեր բնակարանները, անքան ապահոված կլինենք մեր առողջությունը։

Բանվորության խոշոր գանդվածները վորոնք աշխատում են զանազան հանքահորերում կամ բնակում են մութ ներքնահարկերում, ուր բավարար լույս չկա, և չեն թափանցում արեգակի

կենսատու ճառագալթները այնտեղ և հիվանդների թիվը ե մեծ, և մահացությունները։

Թոքախտավորների թիվը ավելի մեծ ե քաղաքներում, քան թե գլուղերում, վորովհետեւ քաղաքի հսկա ու խիտ շենքերն արգելք են հանդիսանում լուսին և թուզ չեն տալիս, վորպեսզի արևի ճառագալթներն առատ ու ազատորեն թափանցեն մեծ շենքերի ներքնահարկերը և նեղ փողոցների վրա գտնվող բնակարանները։

Գլուղերն այդ կողմից բախտավոր գրության մեջ են, այնտեղ և լույսն ե առատ, և ողն ե թարմ, և բուսականությունը փարթամ։

Յերեանի գավառում, վորն ունի 180 հազար ազգաբնակություն, 26 թվին հիվանդանոցալին թոքախտավորների թիվը լեղել ե 72, վորոնցից մեռել են 9 քաղաքացի։ 27 թվին Յերեան քաղաքն ունեցել ե 95 թոքախտավոր, գավառում՝ 11, վորից քաղաքում մեռել են 10 հոգի։ 28 թվին ամբողջ գավառում լեղել ե 330 թոքախտավոր, վորից մեռել են 19 հոգի՝ քաղաքում 17, իսկ գավառում 2։

Անշուշտ սա չի տալիս Յերեանի գավառի թոքախտավորների լրիվ պատկերը, բայց և այնպես թվերը բնորոշ են։

Գերմանիայում յուշաքանչյուր 10.000 բնակչից քաղաքներում թոքախտից մեռնում

են 50 հոգի, իսկ գյուղերում՝ 40։ Գյուղի պակաս մահացությունների պատճառն այն է, վոր գյուղացիներն որվա մեծ մասն անց են կացնում թարմ ոդում, զաշտալին աշխատանքների մեջ։

Վորպեսզի բնակարանները լուսառատ լինեն, նրանց պատուհանները պիտի նայեն զեպի հարավ-արևելք և հարավ-արևմուտք, կամ թե հյուսիս-արևելք և հյուսիս-արևմուտք։ Միայն հյուսիսային կողմ նայող պատուհանները կզրկեն բնակարաններն արևի ճառագալթներից, կամ հարավային կողմ նայողները, ամառային ամբաներին, չափից դուրս կտաքանան։

Կուսամուտների մակարդակը լինելու յե վոչ պակաս, քան սենյակի հատակի մի տասներորդ մասը։ Ասել ե՝ 40 քառ. մետր հատակ ունեցող սենյակի պատուհանները պիտի ունենան առնվազն 4 քառ. մետր։

Բնակարաններ կան, վորոնք թեև մեծ պատուհաններ ունեն, բայց և այնպես լուսավոր չեն, քանի վոր նրանց պատուհանները չեն մաքրվում և պահպում են աղտոտ։ Իսկ հայտնի յե, վոր կեղտի մեջ կորած պատուհանները կիսով չափ պակաս լույս են անցկացնում։

Բնակարանների լուսառատ լինելը կախված են բնակարանների պատերի հատկությունից։

Հայտնի յե, վոր սովորական պատերը, վորոնք ծեփված և սվաղած չեն կավով, կլանում են և պահում լուսի մեծ քանակի։

Կավով ծեփված ու սպիտակացրած պատերը լավագույն են լուսավորության տեսակետից, վորովհետեւ նրանք հայելու նման անդրադարձնում են արեկի ճառագալթները և լուսով վողողում սենյակի խափար անկյունները։

Լավ կլինի, վոր սենյակի պատերի ստորին մասերը $2\frac{1}{2}$ արշին բարձրությամբ լուղաներկ լինեն, վորպեսզի հնարավոր լինի ամիսը միքանի անգամ սապնաջրով լվանալ. այսպիսով սենյակը և մաքուր կապահվի, և կհամապատասխանի առողջապահական պահանջներին։

Սենյակներն ամբողջովին յուղաներկ գարձնելը կամ թղթի պաստառով պատելն առողջապահական տեսակետից մնասակար եւ։ Առաջին դեպքում արգելք ենք հանդիսանում բնական ողափոխության. յուղաներկը ծածկում ե պատերի ծակոտիները և թույլ չի տալիս պատերի մեջ ող խաղա. Իսկ թղթի պաստառը նախ վատ ե անդրադարձնում լուսը, յերկրորդ՝ փոշի յե վերցնում և յերրորդ՝ շուտ ե պատառություն, և աբանքներում հեշտությամբ բուն են դնում միջատներ, հատկապես փայտոջիլներ, վորոնց դժվարությամբ կարելի յե դուրս բցել և վաշընչացնել։

Թղթի պաստառները նաև վտանգավոր են.
Նրանց համարակ տեսակների ներկը հաճախ
պարունակում ե մկնդեղ, վորը խոնավ ու տաք
բնակարաններում գոլորշիանում ե և թունափո-
րում ե սենյակների ողը:

Արհեստական լուսա- Արեխ լուսից զատ մենք
վորույրում կարիք ունենք նաև արհես-
տական լուսի և դա գլխավորապես գիշերները,
յերբ զրկվում ենք արեից:

Հնում մարդիկ ոգավում ելին պարզապես
փայտի լուսից, յերբ վառում եյին ոջախը: Հե-
տագայում գործածել սկսեցին մոմը կամ պատ-
րույգը, վորոնք պատրաստում եյին ճարպից կամ
ձեթից:

Պատրույգների գործածությունը մեծ է
գյուղերում: Բայց ամենից տարածվածը նավթի
լամպարն ե, վորին կհանդիպեք թե քաղաքնե-
րում և թե գյուղերում:

Պատրույգը մնասակար ենախ նրա համար,
վոր նա կլանում ե թթվածնի մեծ քանակ, և
յերկրորդ՝ ճարպի կամ ձեթի այրումից գո-
յանում են գազեր, վորոնք, շնորհիվ իրենց վատ
հոտի, առաջացնում են գլխացավ: Իսկ վորպես-
դի նավթի լամպարը հոտ չարձակի կամ չծխտ,
պիտի հաճախ մաքրվի, պատրույգը հարթ կտրեն,
ամեն որ ապակին սրբեն, բայց, վոր կտրեն

ե, նախապես նավթը ֆիլտրի լենթարկել խիտ
բամբակի կամ շորի կտորի միջով: Նավթի լամ-
պարը ևս կլանում ե թթվածին:

Արհեստական լուսերի մեջ ամենից լավն
ու մեր առողջությունը չվտանգողն ելեկ-
տրական լուսն ե, նախ լուսն ուժեղ ե
ու միանման, վորը չի գրգռում մեր տեսողու-
թյունը, և յերկրորդ՝ նա նավթի ու յուղի նման
սենյակի ողը չի ապականում և վոչ ել ողից
կլանում ե թթվածին: Դրա համար ել այն բո-
լոր քաղաքներում ու գյուղերում, ուր հնարա-
վոր ե լամպարն ու պատրույգը փոխարինել ելեկ-
տրական լուսով, պիտի անել ալդ, քանի վոր ալդ
ձեռվ պահպանած կլինենք աղգաբնակության
առողջությունը:

Բնակարանների տա- Զմռան ամիսներին, ցըտից
բուրյունը պաշտպանվելու համար ընա-
կարաններն ունենալու յեն վորոշ աստիճանի
տաքություն. վորա համար ել գործածության
մեջ են վառարանները:

Մարդ իրեն լավ ե զգում, յերբ սենյակի
տաքության մշտական աստիճանը R⁰ 14—15
ե: Դա առողջարար ու ցանկալի տաքու-
թյուն ե, վոր պիտի ունենա ամեն մի ընա-
կարան:

Մեղ մոտ ամենից շատ գործածության մեջ

են թիթեղյա վառարանները և գյուղերում ել բուխարին կամ թոնիրը։ Բայց նման ձեռվ բնակարանների տաքացնելը չափից դուրս հակառառողջապահական եւ են խնալողութիւնն տեսակետից ել անգործնական։

Թիթեղյա վառարանները շատ շուտ տաքանում են և շուտ ել սառում։ տեսական տաքությունն նրանք բնավ չունեն։ Յերբ վառում ես, սենյակի տաքությունը հաճախ բարձրանում ե 25 աստիճանի, այնպես վոր շնչառությունդ ծանրանում ե, այսինչ առավոտները, յերբ չեն վառվում, սենյակի ջուրը սառչում ե։

Բնական ե, վոր նման սուր փոփոխությունները միանդամայն վնասակար են մեր առողջության համար։ մարդիկ կարող են մրսել ու հիվանդանալ։

Թիթեղյա վառարանները հետեւալ անհարմարություններն են ներկայացնում։—

ա) Նրանք բնակարանների տաքությունն անհամաշափ են պահում կամ չափից դուրս տաքացնում են, այնպես վոր դժվարությամբ ես շնչում, կամ, ինչպես վերն ասացինք, ցրտից սենյակի ջուրը սառչում ե։ Յեզ դա նրանից ե, վոր թիթեղը շուտ տաքանում ե, շուտ ել սառչում։

բ) Խիստ վառած ժամանակ թիթեղյա վա-

ռարաններն ու նրանց խողովակները կարմրում են և ալրում իրենց վրա նստած փոշին, վորից առաջանում ե հոտ և ուզար։

գ) Թիթեղյա վառարաններից յերբեմն բնակարանների ողը մաքուր ու թարմ չի լինում. նրանց բարակ պատերից կամ խողովակների արանքներից հաճախ դուրս են դալիս վնասակար դագեր, վորոնց մեջ նաև ածխաթթու դագը, վարը թունավորում ե սենյակի ողը։

դ) Թիթեղյա վառարանները կլանում են բնակարանի խոնավությունը, յեթե նա քիչ ե, և չափից դուրս չորացնում ողը, վորից զբգչում ե մեր կոկորդը և առաջ բերում հազ. իսկ յեթե բնակարանները խոնավ են, առաջ են բերում տաք գոլորշի, այնպես վոր, թփում ե, թե դոնվում ես բաղնիքում։ Յերկու դեպքում ել մեր առողջությունը վնասվում ե։

Թիթեղյա վառարանները նաև չափազանց անգործնական են. նրանք մեծ քանակությամբ փայտ են կանում, սակայն քիչ տաքություն տալիս։ Պատճառն այն ե, վոր խողովակները վոլորաններ չունեն, հետևապես տաք ոդն ու ծուխն անմիջապես անցնում են խողովակների մեջ ու այնտեղից գուրս մղվում, հնարավորություն չունեն իրենց տաքությունը վառարանին կամ սենյակին տալու։

Թիթեղյա վառարաններում գործ ածվող փայտի միայն 15—20 տոկոսն է ոգտագործվում բնակարանի տաքության վրա. Թացած խոշոր տոկոսը կորչում է աննպատակ:

Նկատի ունենալով այս ամենը, թիթեղյա վառարանները պիտի համարել հակառաօղապահական յեվ վնասակար, նետելվագիս դուրս պիտի հանել գործածությունից:

Համեմատաբար նպատակահարմար է գործ ածել նոլլանդական սեսթեմի վառարանները, զորոնք շինվում են աղյուսից և չունեն վերը հիշված անհարմարությունները: Նրանք դանդաղ են տաքանում, սակայն տաքությունը յերկար են պահում:

Հոլլանդական վառարանները յերկու տիպի յեն. նրանցից մեկն ավելի հասարակ տեսակի յե, զորի վառելու ձևը պիտի իմանալ, այլապես նա կարող է ավելի վնասակար լինել, քան թիթեղյա վառարանը: Կարող է ուզար առաջացնել և այն աստիճանի խիստ, զոր մահացություն պատճառի: Յեվ դա տեղի կարող է ունենալ այն ժամանակ, յերբ վառարանի դուրը ժամանակից կանուխ փակեն, յեվ վառարանի փայտը դեռեվս լրիվ վառված չլինի:

Մուսա տեսակը հերմետիկ սիստեմի վառարանն է, զորի դռները յեթե ժամանակին անուր

փակեն, այլևս վորեւ գագ վառարանից դուրս չի գալ:

Հոլլանդական տիպի վառարանները ևս անկատար են, քանի վոր շարունակ պիտի հետեւ վել, վորպեսզի բնակարանները տաք մնան, և տաքությունն ել համաշափ լինի: Իսկ դա դյուրին բան չե. վառարանների վառելը յերկար ժամանակ է խլում և սենյակների կեղտությունն պատճառ դառնում:

Ինչ վերաբերում է ոչ խններին ու թոնիրներին, զորոնք գործածության մեջ են մեր գյուղերում, ավելի քան անգործնական են ու հակառաօղապահական: Նրանք շատ քիչ են տաքացնում և հաճախ ել ծխով լցնում են խրճիթները, զորից վտանգվում է գյուղացիների տեսողությունը:

Զմեռները գյուղերում թոնիրը ծառայեցնում են զորպես քուրսի: Իսկ զուրսու մնասակարությունն ակնհայտ է. Նա պատճառ է դառնում մրսելու: Քուրսի գործածողները հաճախ հիվանդանում են թոքերի բորբոքմամբ կամ ստանում են ուժատիզմ:

Շատ անգամ մալրերը քուրսու տակ են գնում իրենց ծծկեր յերեխաններին և իրենք աշխատանքի կենում ու յերկար ժամանակ մոռացության տալիս: Քիչ չեն դիպրերը, յերբ քուր-

սու տակ թողած լեռեխան լուրջ այրվածքներ և
ստացել և մահացել:

Հանգիս յեզ բուն **Առողջ բնակարանների հետ**
ե կապված մեր հանդիսան
ու քունը:

Առորյա լարված աշխատանքներից հետո
սովորաբար մարդիկ հոգնում են և կարիք են
զգում հանգստի: Լավագույն հանգստութիւննը
քունն ե, վորովհետև քնած ժամանակ ե,
վոր մեր մարմի մասերը՝ մկանները, ներվերը,
ուղեղը, սիրաը, թոքերը, մի խոսքով՝ մեր բո-
լոր մեծ ու փոքր գործարաններն իրոք հան-
գըստանում են: Նրանք փոխանակ լարված աշ-
խատելու, փորպիսին տեղի ունի արթուն ժամա-
նակ, գործում են դանդաղ ու հանդիսաւ:

Ցուրաքանչյուր հասակ ունի իր հանգստի
սահմանված ժամանակամիջոցը: Տարիքավոր ու
աշխատող մարդու հանգիստը նախատեսվում է
7—8 ժամ: Աշխատավորական լոգունքն ասում
ե՝ 8 ժամ աշխատանք, 8 ժամ հանգիստ և 8
ժամ ել անձնական վայելք: Ասել ե՝ մարդս իր
կյանքի մել լեռուրդը պարտավոր ե քնի մեջ
անցկացնել կամ, այլ խոսքով՝ նա գամված ե
մնալու մահճակալին: Մրանից լեռնում ե, վոր
մենք չենք կարող անտարբեր գորնվել կամ աչ-
քաթող անել մեր մահճակալներն ու անկողինը,

վորի մեջ անց ենք կացնում մեր հանգստի թան-
գագին ժամերը:

Մեր հանգիստը կատարյալ լինելու համար
պիտի վոր մահճակալները լինեն բավականաչափ
արձակ ու մաքուր: Լավագույնը լեռկաթե մահ-
ճակալն ե, վորովհետև գլուրին կլինի մաքուր
դրության մեջ պահել և հարկավոր ժամանակ
յեռացած ջրով լվանալ կամ գեղինֆեկցիայի
յենթարկել միջատներից ազատելու համար: Եցդ
տեսակետից փայտե մահճակալներն անհարմա-
րություն են ներկայացնում: Նրանց մեջ արա-
գությամբ են զարգանում փայտոջիները և դժ-
վարությամբ կարելի լեն նրանցից աղատվել:

Անկողինը բաղկացած պիտի լինի սովորա-
կան ներքնարկից, բարձից և վերմակից: Լավա-
գույնն ե ներքնարկն ու բարձը լեցնել ծովա-
լին կամ տեղական խոտով կամ թե հարդով:
Մաքրության տեսակետից ներքնարկն ու վեր-
մակը պատած պիտի լինեն սավանով, փորպես-
զի գլուրությամբ լվացվեն ու փոխվեն:

Շատ ընտանիքներում գործածության մեջ
են թռչունների վետուրներից ու աղվամազից
պատրաստված անկողիններ, վորոնք չափազանց
փափուկ ու տաք են լինում: Նման անկողինը
վնասակար ե ու հակառառողջապահական, վորով-
հետև տաք անկողնում քնողները հաճախ բըրտ-

նում են, հետևապես դյուրութիւնմբ կարող են մըսել ու հիվանդանալ: Բացի դրանից փափուկ տնկողինը մարդկանց սովորեցնում է մեղկության ու ժիզիկական բնօւրիքյան, այլեվ արգելք ե հանդիսանում լրիվ բուն ունենալուն:

Տաք ու փափուկ անկողինը հատկապես ֆասակար ե յերեխաների համար. նա պատճառ ե դառնում ոնանիզմի և միզափամփուշտի մկանների թուլության. վերջինս նպաստում է անկամ միզահոսութիւնն:

Քնի ժամանակ պիտի հանվել, վորպեսզի կարողանանք աղատ չնչել, և մեր արյան շրջանառությունն ել տեղի ունենա անարգել: Հագուստով քունը վոչ միայն լրիվ չի կարող լինել, այլև նա մեզ պատճառում է անհանգստություն:

Հագուստը նեռում է մեր ընչառությունը յեվ արգելք ե հանդիսանում մեր արյան նորմալ ցցանության:

Շատ անգամ մարդիկ, ինչպես պատահում ե, այնպես ել քնում են, նշանակություն չեն տալիս մահճակալներին ու տնկողնին. պառկում են շորերով և վրաներն են առնում հին վերաբերուն կամ մի լաթի կառը, առանց ուշադրություն դարձնելու, վոր նրանց վրա մեծ քանակությամբ փոշի ու կեղտ կա, վորոնք կարող են

անցնել մեր մարմնին: Նման անփութությունն անթույլատրելի լե և զնասում է մեր առողջությանը:

Վորպեսզի քունը կատարեալ և լրիվ լինի, պիտի ընտանիքի յուրաքանչյուր անդամ ունենա իր առանձին մահճակալը: Վերջ պիտի տրվի կողք-կողքի քնելու վատ սովորության, մանափանդ ամուսինների: Մի մահճակալի վրա լերկու հոգով չեն կարող արն ազատությունը վայելել, ինչ վոր կունենար մի անձը: և յեր-կրորդ՝ մենք գիտենք, վոր քնած մարդն արտաշնչման միջոցով վչացնում ե շրջապատի ողը, մինչդեռ նրան անհրաժեշտ ե թարճ ոդ, վորից կարողանա վերցնել պահանջված թթվածինը:

Վորքան խիտ ու շատ լինի կողք-կողքի քնողների թիվը, այնքան ավելի կտպականվի շրջապատի ոդը, և կդժվարանա թարճ ոդի հոսանքը:

Միատեղ քնելու ամենազլիսավոր վտանգը նրա մեջ ե, վոր հիվանդությունների դեպքում դլուրությամբ կարելի լի իրար վարակել: Հատկապես վտանգավոր ե, յերբ քնում են թոքախտավորի հետ միատեղ:

Հիվանդի արտաշնչումը, հազը, նրա հետ ունեցած հարաբերությունն ու շփումները, բնականաբար, արագացնում են մանրեների տեղափոխու-

թլունն ու հիվանդության վարակը: Նման զեպքերում հատկապես զգուշ պիտի լինել և ուշադրություն կենտրոնացնել փոքրահասակների վրա, վորովհետեւ այդ հակասում ամենից շուտ յենթակա լին թոքախտի ընդունման:

Փոքրահասակների միատեղ քնացնելն ամենից շատ տարածված ե մեզ մոտ, վորին նպաստում ե չքավորությունն ու բնակարանային նեղվածությունը:

Վորքան ուեկորդային ե Խորհրդային Հայաստանում բազմածնությունը, նույնքան դժվարին են բնակարանային պայմանները: Բնակարանային նեղվածությունն ավելի մեծ ե քաղաքներում, որինակ՝ Յերեանում շնչին ընկնում ե շխորանարդ մետրից պակաս: Դրա համար ել մեզ մոտ կողք-կողքի ու մի վերմակի տակ միքանի յերեխա պառկեցնելը սովորական յերեսույթ ե:

Թոքախտավորների մեծ ռոկոսը դրա հետեւ վանք պիտի համարել:

Աղդաբնակության մեջ տբախոմայի, քոսի, տրիպեկրի տարածման գլխավոր պատճառներից մնկն ել միմնույն անկողնում քնելն ե:

Ամենախիստ պայքար պիտի մղել դրա դեմ և պետության ու հասարակության ուշադրությունը հրավիրել բնակարանային նեղվածության և հակառառողջապահական պայմանների վրա:

II. Ի՞ՆՉՊԵՍ ԱՌՈՂՋԱՑՆԵԼ ՄԵՐ ԲՆԱԿԱՐԱՆԸ

Բնակարանի Մեծ նշանակություն ունի ընթարքյունը բնակարանի տեղն ու ընտրությունը: Զպիտի ծուլանալ, ննարավորությունների սահմաններում պիտի խնամքով ընտրել բնակարանները և նկատի առնել նրանց հարմարությունները:

Լավ ե փոքր ինչ թանգ բնակարան վերցը ներ, վորպեսզի նա լինի լուսառատ, չոր և ընդգարձակ, քան թե ըիչ զքամ վճարել և ունենալ խոնավ, նեղվացք և արեգակի ճառագալթներից զուրկ բնակարան:

Նման խնայողությունը մեզ վրա ավելի թանգ կնստի, վորովինետեւ հակառառողջապահական բնակարաններում ընտանիքները, հատկապես յերեխաները, զուրությամբ յենթակա յեն հիվանդությունների, վորոնք արտակարգ ու մեծ ծախքերի դուռն են բացում:

Ամեն մի մարդու անհրաժեշտ ե 30 խոր, մետր ոդ, վորպեսզի նրանից վերցնի հարկավոր քանակությամբ թթվածին:

Հաճախ մարդիկ զոհաբերում են բնակարանների առողջապահական պայմանները, վորպեսզի մոտ լինեն իրենց ծառալության վարիին. դա անթույլատրելի լի:

Ավելի լավ է կտնուխ արթնանալ յեզ բարմ ոդի մեջ փոքր ինչ յերկար քայլել, քան թէ հակառաղջապահական ու նեխալած բնակարանի ոդը շնչել:

Կոլտուրական մարդն ամեն բանից բարձր պիտի գասիր ընտանիքի յեզ մատաղ սերնդի առողջությունը. վաս բնակարանները կորսաքեց են նրանց համար:

Ի՞նչպես օեղափոխվել Սովորաբար տեղափոխու-

նոր բնակարան թյունները մի բնակարանից մյուսը կատարվում են շատ արագ, առանց նախապարաստական աշխատանքների:

Շատ հաճախ մի բնակարանի հին բնակիչները գեռիս իրենց իրերը չտեղափոխած, նորերը բերում թափում են իրենցը. ստացվում ե չափազանց անմիտար պատկեր. ամեն կողմ փոշի, կեղտ, շատ անգամ պատերի պաստառները պատառութված ու լի փայտոջիշներով... Այսպիսով նոր բնակիչը հնից ժառանգություն և ստանում ամեն կեղտ ու հաճախ ել՝ թոքախտ, տիֆ և այլ վարակիչ հիվանդություններ:

Սա ևս անկուլտուրականություն ե և առողջապահության մեջ անգրագիտության հետեւ վանք:

Ամեն մի քաղաքացի պիտի իմանա և պարտականություն համարի, վոր չի կարելի նոր

բնակարան տեղափոխվել, առանց նախապես սենյակների հատակներն ու պատուհանները ուսունաջրով լվանալու և կամ առաստաղներն ու պատերը մաքրելու և կարգի բերելու:

Ի՞նչպես պիտի մաքրողության մեջ սենյակները համար, ինչպես գիտենք, չափազանց վնասակար և և հիվանդությունների ազբյուրք: Դրա համար ել ամեն կերպ պիտի աշխատենք միք բնակարաններն ազատել փոշուց և ցանկալի մաքրության մեջ պահել, այլապես մենք վոանգած կլինինք մեր և մեր մերձավորների կյանքը:

Ամենից առաջ սանյակները պիտի ազատել ամեն տեսակի ավելորդ իրերից, մանավանդ հին ու անգործածելի լաթերից ու շորերից, վորոնք տարիներով մնում են թափթփված մահճակալների տակ, ովհարանների յետե, խուլ անկյուններում, վորոնց վրա փոշի յե հավաքվում և ոդի ամեն մի թեթև հոսանքի հետ բարձրանում խառնվում և սենյակի ողի հետ ապա շնչառության սիջոցով մտնում ե մեր թոքերը:

Գլուխակից ու իր յերեխաների առողջությունը գնահատող տանտիկինը պիտի տշխատի մաքրության մեջ պահել սենյակի մութ ու խուլ անկյունները, ուր չեն թափանցում արեի հառագայթները:

Շատ հաճախ անփութության հետևանքով տան իրերը, հատկապես հագուստեղենը, թափ են տրվում կամ այն սենյակում, ուր քնում են, կամ թե միջանցքում, մինչդեռ դա անթույատրելի է։ հագուստներն ու իրերը փոշուց պիտի մաքրվեն դուրսը, սենյակներից հեռու։

Սենյակ մտնելիս սովորություն պիտի դարձնենք միշտ ել մաքրել մեր կոշիկները և հագուստը, զարոնց զբա մեծ քանակությամբ փոշի յե նստում շրջագալության ժամանակ։

Բնակարանները պիտի մաքրել թաց ավելով կամ թաց չոտկով. այդ ձևով հնարավոր ելինում ամբողջ փոշին ժողովել. մինչդեռ չոր ավելը սենյակներում բարձրացնում եռ ուժեղ փոշի, զորը նորից նստում ել իրերի ու կանկարասիների զբա. բացի այդ պիտի մաքրել վոչ միայն սենյակների կենտրոնն ու այն մասերը, ուր իրեր չկան, այլ բոլոր սնկյունները, մահճակալների և կանկարասիների տակը, ալյապես փոշ շու վասակար ազգեցությունից ազատված չենք լինիլ. Ուստի զոլքան բնակարաններում քիչ իրեր լին են, անգան լավ, այնքան զյուրին կլինի սենյակների մաքրելը, և ոդն ել շատ կլինի, վորովնետև շատ իրերը պակասեցնում են ոդի քանակը։

Հատկապես ուշադիր խնամքի կարիք ունեն

նեղ ու ազքատ բնակարանները, ուր առանց այն ել հակառակ պահական պայմանները մեծ են։

Լավ կլինի ամեն շաբաթ, իսկ յեթե զա անհնար ե, գոնե 15 որը մեկ, ընդհանուր և հիմնական մաքրման յենթարկել բնակարանները, քանի վոր սենյակների հատակները միայն սրբելով ու փոշին ել ժողովելով մեծ բան առած չենք լինի։

Հարկավոր ե ժամանակ առ ժամանակ սենյակներից գուրս հանել անկողինը, հագուստեղենը, վարագույրները, խալիները, առհասարակ այն բոլոր իրերը, վորոնք մեծ քանակությամբ փոշի յեն վերցնում, և բնակարանից հեռու, բացովիա, թափ տալ ու արեի տակ փոել։ Սենյակների պատերը, առաստաղը, անկումների փառը, վորը զոյանում ե ճրագի ծխից, պիտի խընամքով մաքրել. թաց շորով պիտի վերցնել պատուհանների զբա նստած փոշին. սենյակների հատակներն ու պատուհանները լվանալ տաք սապնաջրով, ապա լայն բացել սենյակների պատուհանները և, յեթե ձմեռ ե, վառարանները լավ վառել, վորպեսզի բնակարանների խոնավությունն անցնի։

ԹՅակարանների
ողափոխությունը բնական ողափոխության
միջոցով շարունակաբար նորոգվում է։ Դռների
ու պատուհանների արանքներից, պատերի ծա-
կոտիներից դրսի թարմ ողն անլնդհատ ներս ե
մտնում մեր սենյակները, իսկ ներսի տաք ողը,
վորն ապականվում է մեր չնշառությամբ, դուրս
ե գալիս։ Դրա համար ել 30 մետր մեծություն
ունեցող սենյակի ողը մի մարդու համար լիուլի
բավարար է։

Բնական ողափոխությունը մեծ նշանակու-
թյուն ունի բնակարանների առողջացման տե-
սակետից, դրա համար ել թույլ չպիտի տանը՝
վորեւ արգելառիթ խանգարի այդ բարեքը։

Պատերի բնական ողափոխության խանգա-
րում են խոնավությունն ու լուղաներկը։ լեռ-
կուսն ել ֆակում են պատերի ծակոտիները և
թույլ չեն տալիս նրանց միջոցով ազլսու տեղի
ունենա ողափոխություն։ Թղթե պաստառներն
ել զգալի կերպով թուլացնում են պատերի այդ
կարեւոր հատկությունը։

Սակայն միայն բնական ողափոխությունն
անբարար է մեր բնակարանների լրիվ ողա-
փոխության համար։ այնպես վոր անհրաժեշտ է
միաժամանակ նաև արհեստական ողափոխու-
թյան մասին մտածել։ այսինքն՝ պատուհանների

և պատերի մեջ պատրաստել հատուկ ողանցքեր,
վարոնց բացելով կարելի լինի մերթընդմերթ
ավելի զյուրությամբ նորոգել բնակարանների
ողը։

Զմուռն ամիսներին պատուհանների կամ
ողանցքերի պարզ բացումով կարող ենք լավա-
գույն ողափոխություն կատարել մեր բնակա-
րաններում, իսկ ամառվա տաք լեղանակներին
հանցագործություն է փակ թողնել սենյակների
պատուհանները։ Նրանք բաց պիտի մնան որ ու
գիշեր։

Ամենացուրտ լեղանակներին անդամ սե-
նյակի ողափոխությունը պիտի կատարվի որա-
կան միջանի անգամ, հատկապես ամեն օւտե-
լուց հետո և մեկ ել քննելուց կես ժամ առաջ։

Ողափոխությունը տևելու լի անըան ժո-
մանակ, մինչեւ վոր սենյակի ողը լրիվ նորոգվի
ու թարմանա։

Կանոնավոր ողափոխությունը վոչ միայն
նորոգում է բնակարանների թթվածինը, այլեվ
չորացնում է սենյակը։

Դրսի սառն ողը կլանում է մեր սենյակի
խոնավությունը այն ժամանակ, լերը նա տա-
քանում է։

Մասը սենյակներում վորքան ել ողափո-
խություն կատարենք, չորացում տեղի չի ունե-

նալ. Ուրեմն վորպիսպի կաբողահանք չորացնել մեր բնակարանները, պիտի միաժամանակ վառենք վառարանները և բացենք պատուհանները կամ նրանց ողանցքերը:

Խոնավ բնակարանների ողափոխությունը լինելու յէ հաճախակի ու տեվական:

Յերբ խոնավ սենյակներում վառում ենք թիթեղիա վառարաններ, շատ չանցած՝ մենք ականատես ենք մշուշի. դա տաքությունից առաջ ցած խոնավության գոլորշիացումն ե, վորը նորից մնում ե սենյակում և նստում պատերին, յեթե տեղի չի ունենում ողափոխություն:

Այսպիսով առանց կանոնավոր յեվ մօտական ողափոխության անհնարին ե պատկերացնել առողջ բնակարան:

ՆԲՉԱՐԵԱՆԵՐԸ

Կապես անչափահաններինը, պիտի գրավեն բնակարանների ամենալուսավոր, արևոտ և ընդարձակ սենյակները. Մինչդեռ մենք հակառակն ենք տեսնում. մեզ մոտ ննջարան սովորաբար ընտրում են մութ ու փոքրիկ սենյակները, իսկ մեծ ու լուսառատ սենյակները դարձնում են ճաշարան կամ ընդունաբան:

Ննջարանները միանգամայն աղատ պիտի

մնան ավելորդ իրերից. նրանց կահավորությունը չափազանց պարզ ե լինելու. մահճակալներից և միքանի անհրաժեշտ պարագաներից զատ այլ իրեր չպիտի լինեն:

Ննջարանների պատուհաններն աղատ պիտի լինեն ամեն տեսակ վարագույրներից, վորոնք խանգարում են լույսն ու արեգակի ճառագայթների ներս թափանցելուն:

Ննջարանները պահպելու յեն չափազանց ժաքուր, ամեն որ խնամքով պիտի սրբել թե հատակը և թե իրերը թաց ավելով ու շրով:

Անկողինները հսճախ պիտի փոել արեւում, սպիտակեղեննը շուտ-շուտ փոխել, մահճակալները յեռացրած ջրով լվանալ, վոր պարագիտներ չլինեն:

Ամառվա ամիսներին ննջարանների պատուհանները պիտի բաց պահել որ ու գիշեր, իսկ ձմեռները հաճախակի ողափոխություն կատարել: Պահանջից ավելի տաք ննջարանները վնասակար են և խանգարում են հանգիստ քունը:

Ննջարանները, յեթե հնարավոր ե, պիտի հանգիստ թողնել ցերեկները. այնտեղ չպիտի աշխատել ու բնավ ծխել:

Զպիտի ծուլանալ ու ննջարանում թողնել յերեխանների կամ մեծերի աղտոտ ճերմակեղենները. նրանք ապականում են ողը:

Որինակելի ննջարաններ ունեցող ընտանիքները, բնակչանաբար, առողջ կիննեն, իսկ յերեխաններն՝ առուլդ ու կայտառ:

Մաքուր, լուսառատ ու ոդաշատ ննջարանները լավագույն չափանիշը պիտի համարել կուլտուրական ու առողջապահական գիտելիքների մեջ գրագետ ընտանիքների:

Պայքար և նային
միջամբերի գեմ

Անմաքրության հետեւ վանք պիտի համարել այն բազմաթիվ միջամբները, վորոնք զարգանում են բնակարաններում և մարդու վրա: Վոյջիլը, լուն, փայտոջիլը, տարականն ու ճանաը բազմանում են միմիշայն կեղտի ու անմաքրության մեջ: Նրանք պատճառ են դառնում բազմաթիվ հիվանդությունների, վորոնցից շատերը վտանգավոր են ու մահացու:

ա) Բծավոր և անդրադարձ տիֆն առաջանում են վոյջի խածից. յերբ վերջինս ծծում և այդ հիվանդություններով վարակվածի արյունը, նա միաժամանակ արյան հետ վերցնում են նաև մանրեները և յերբ խածում են առողջ մարդու, նա իր թունավոր թքի հետ միասին փոխանցում ե հիվանդությունը. Բծավոր տիֆ տարածողը վոյջին ե: Զկա վարակման այլ յեղանակ, վոր տարածեր բծավոր տիֆը: Դրա համար ել կուլտուրական յերկներում, ուր բնակարանների ու

մարմնի իդեալական մաքրություն ե պահպանվում, բծավոր տիֆը գոյություն չունի:

բ) Անդրադարձ տիֆի տարածողներն են՝ վոյիլ և փայտոջիլը:

գ) Ժանտախտի տարածողը լուն ե. Նա փոխանցում է ժանտախտը մարդուն նույն հիվանդությամբ վարակված միներից:

դ) Ճանճերը նպաստում են՝ վորովանի տիֆի, խոլերայի, գեղինտերիայի և թոքախտի տարածման:

Նրանք նաև այդ հիվանդություններով վարակվածների արտադրությունների ու խորխի վրա, ապա թաթերի միջոցով դրանց մանրեները փոխանցում են ջրին, ուտելիքներին և կաթին, վորոնցից և վարակվում ենք մենք:

Կան մի շարք այլ հիվանդություններ, վորոնք բացառապես անմաքուր բնակարտների հետ են կապված: Բացի վերը հիշատակված հիվանդություններից կան մի շարք մանկական վարակիչ հիվանդություններ՝ բութեշ, կարմրուկ, դիֆտերիա, վորոնց բները հանդիսանում են նեղ, խոնավ, կեղասոտ ու աղքատ բնակարանները,

Մաշկի հիվանդություններից քոսը, ինչպես և աչքի հիվանդություն՝ տրախոման, կապված են անմաքրության հետ: Առանց մաքրության անհնարին ե այդ հիվանդությունից ազատվել:

Բացի հիվանդություններից անմաքրությունը բուլացնում է մարդկային ուժերը։

Մեր բնական դիմացկունուրյունը պակասում է տաղոտուրյունից, յեզ մենք չենք կարողանում դիմադրել բնուրյան ու կյանքի դժվարություններին։

Ով ուզում ե յերկար ապրել, նա պիտի մաքուր ապրի։

Ի՞նչպես պայքարել միջատների դեմ։

Ամենից առաջ պիտի իմանանք, վոր բոլոր կուլտուրական յերկրներում, ուր մարդիկ ապրում են մաքրության մեջ, հաճախ են գնում բազնիք, փոխում իրենց ձերմակեղենը, բնակարանները պահում են մաքուր ու որինակելի, նման յերկրներում հատուկ միջատների դեմ պայքարի կարիք չի զգացվում։

Պարագիտների դեմ լավագույն պայքարը սապոնն ե յեզ տաք զուրը։

Բայց յերբ բնակարաններն աղտոտ են և միջատներն ել շատ, այն ժամանակ բնակարանների պարզ մաքրելը բավական չե, պիտի այլ ոժանդակ միջոցների դիմել, վորպեսզի կարողանանք միջատներից ազատվել։

Ամենից լավը սենյակների պատերն ու կահարասիները, յեռացրած ջրով լվանալն ե, իսկ մեր ձերմակեղենն ու հագուստեղենը պիտի ջրի մեջ յեփել, ապա լվանալ։

Բայց շատ հաճախ այլ պարզ ձեռվ ել չենք բավականանում, դիմում ենք ավելի բարդ միջոցների՝ դեզինֆենկցիալի։ Այսինքն միջատներին վոչնչացնում ենք տաքության, ծծմբի ու ֆորմալինի գոլորշիների կամ թունավոր հեղուկների միջոցով, բայց դրանք կատարվելու լեն մասնագետների՝ բժշկի կամ բուժակի ձեռքով։

Միջատները բազմանում են համարյա լոթորը մեկ, դրա համար ել մեր պայքարը նրանց դեմ շարունակական ե լինելու։

Միայն սովորություն դարձած մեր ամենուրյա մաքրությամբ կարող կլինենք բնակարանային թշնամիներից—միջատներից ազատվել։

Ճանձերից ազատվելու համար մենք չպետաի բավականանք բնակարանների մաքրությամբ։ մենք հետեւելու լենք, վորպեսզի մեր բակերն ու տների շրջակալըն ազատ լինեն ամեն տեսակի աղտոտություններից ու կերակուրների մնացորդներից, վորովհետև ճանձերը բազմանում ու իրենց ձվերն ածում են նրանց վրա։

Առորյա կյանքում մարդը Սպոռությունների մեծ քանակությամբ ավելի հեռացումը լորդ Նյութեր և արտադրում, վորոնք յեթե խնամքով չժողովվեն և մեկուսացվեն, կարող են աղտոտությունների ու փառաթների պատճառ դառնալ և առաջացնել հիվանդություններ։

Յուրաքանչյուր չափահաս մարդ տարեկան արտադրում է 40 դույլ արտաթորություն ու մեզ թացի ալդ՝ անտեսությունից գոյանում են ավելորդ նյութեր՝ լվացքի ջուր, կերակրի մնացորդներ, մոխրի, և լեթե այս անենին ավելացնենք սենյակների և անասուններից գոյացած աղբը, այն ժամանակ կոտացվի պատկառելի քանակ:

Հասկանալի է, վոր նման բոլոր վասակար նյութերն ու աղտոտությունները, լեթե թողնենք բնակարաններին կից բակերում կամ անխնամ թափենք շրջակալքում, շատ շուտով կառաջացնեն փտումներ ու գազեր, վորոնք կվարակեն ողը և անհնարին կդարձնեն նրա շնչելը, այս կծծվեն հողի մեջ և կթունափորեն այն չուրը, վոր կա մոտերքը, լինի դա տուու, ջրհոր թե աղբյուր, Այսպես վոր այդ ամեն աղտոտությունները պիտի բնակություններից հեռու տանել և խնամքով վոչնչացնել, վորպեսզի նրանցից վսաս չստանանք:

Աղտոտությունների կուտակումները պատճառ են գառնում բազմաթիվ հիվանդությունների, վորովհետև փտումների մեջ ե, վոր զարգանում են ամեն տեսակի մանրեներ:

Առողջ բնակարաններ ունենալու համար անհրաժեշտ ե, վոր բնակարանների շրջապատի

ողը, հողն ու ջուրը վարակված ու թունավորված չլինեն մարդկային կրանքից գոյացած ավելորդ նյութերի մաքրութիւնից:

Մեծ քաղաքներում այդ նյութերի մի մասն անմաս և դառնում կանալիզացիայի միջոցով, չոր նյութերի ավելցուկներն այրում են քաղաքից դուրս, իսկ կենդանիների աղբը դաշտերից դուրս, կանալիզացման վրա լին գործադրում: Սակայն մեր իրականության համար դա չափազանց ծանր պրոբլեմ է, քանի վոր մեր լերկու քաղաքները՝ Յերևանն ու Լենինականը զուրկ են կանալիզացիայից, և հնարավորություն չկա մեծ քանակությամբ կուտակվող՝ քաղաքի աղբն արագ ու ժամանակին մեկուսացնել:

Այդ տեսակետից մեր գյուղերն ավելի վատթար պայմանների մեջ են, վորին խիստ նպաստում ե գյուղացիների տգիտությունը:

Մեր գյուղերը չունեն ամենատարբական առողջապահական հարմարություններ, չկան արտաքնոցներ, ամեն մի աղբ, մարդկային ամենորյա արտաթորությունների հետ միասին, անզգուշորեն ու անփութութեամբ թափվուժ ե բնակությունների շուրջը, բակերի մեջ ու պատերի տակը: Բավական ե մի ուժեղ անձրե, վոր այդ ամենը սրբի ու տանի, թափի ջրերի ու գետերի մեջ և վարտկի դրան ել պիտի

վերագրել այն մեծ մահացությունները, վոր ամառվա ամիսներին արյունալից լուծից մեռնում են լեբեխաները, իսկ մեծերը՝ վորովայնի տիֆից:

Գյուղերում առաջին հերթին հրամայական անհրաժեշտություն ե կառուցել արտաքնոցներ՝ հեռու ջրհորներից ու աղբյուրներից: Արտաքնոցները խորը պիտի լինեն և լավ ծածկված, վորպեսզի նրանց հոտը չափականի ողը, և ճանձերն ել բուն չդնեն: Լավ կլինի ժամանակ առ ժամանակ արտաքնոցների մեջ անեփ կիր ածել վորպես ախտահանիչ:

Աղքի և կերակուրների մուացորդների համար լավ ե արկդներ պատրաստել և բերանները փակել, վորպեսզի ճանձերը ձու չդնեն ու չըրազմանան. յերբ լցվեն, անմիջապես պիտի քաղաքից գուրու կըել և տանել բացոթյա հեռավոր վայրեր:

Մեծ ուշաղրություն պիտի դարձնել բնակարանների բակերի և շրջակայքի մաքրության վրա: Կուլտուրական լեբերներում անգամ զլուդերում փողոցներն ու բակերը բարում են, տների շուրջը պարտեզներ են շինում ու ծառեր անկում, վորպեսզի բուսականությունը թարմացնի ու թթվածնով հարստացնի ողը:

Հատուկ ուշաղրություն պիտի դարձնել

խոհանոցների մաքրության վրա, առանձնապես այն ամանների ու տեղերի, ուր պահվում են ուտեստեղենները:

Շվեյցարիայում ու Գերմանիայում բանվորական ու գյուղական տներում ամենաօրինակելի մաքրության մեջ պահվում ե խոհանոցը, ուր և ճաշում են ու ընթրում:

Մաքուր ու ճանձերից անվտանգ պահել մեր ուտեղենիքները—դա առողջապահության այբուբենն է:

Բնակարատիների, բակերի ու փողոցների մայրումը տեղի պիտի ունենա ամենայն որ նա պիտի դառնա սովորություն, ինչպես սովորություն է մեր ամենորյա հացը:

Ճատ ընտանիքներ, գնաճի կենգաճիներ հատկապես զյուղերում, բնակարաններում պահում են զանազան ընտանի կենդանիներ՝ շուն, կատու, թռչուններ և այլն, վորոնք վոչ միայն աղտոտում են բնակարաններն ու ապականում ողը, այս պատճառ են զառնում հիվանդությունների:

Հավերը, ինչպես և շներն ու կատուները, բացի այն, վոր մեծ քանակությամբ միջամաներ են ունենում, վորոնք հեշտությամբ կարող են փոխանցել ընտանիքի անդամներին, մանավանդ յերեխաներին, վորոնք շարունակ շփման մեջ

են նրանց հետ, այլև կարող են դրսից վարակ բերել բնակարանները:

Ծներն ու կատունները հաճախ ունենում են եխինակոկի ճիճուներ, վորոնց ձվիկներն արտաթորությունների հետ դուրս են գալիս և կարող են մնալ նրանց բրդի վրա: Այնպես վոր, յերբ յերեխանները փայտայում կամ համբուրում են շներին, հեշտությամբ կարող են ալդ ձվիկներից բերանը տանել և վարակվել: Լավ ե, յերբ եխինակոկի ճիճունները սահմանափակվում են մաքու աղիքներով. բայց նրանք անցնում են նաև այլ գործարաններ, հատկապես լյարդը, ուր առաջ են բերում նորագոյացումներ, վորոնք պահանջում են լուրջ վիրս բուժական միջամտություն:

Բնակարաններում ընտանի կենդանիներ պահելու վաս սովորությունը պիտի վերացնել, մանավանդ քաղաքներում, ուր առանց այն ել նեղվածություն ե, իսկ գյուղերում նրանց պիտի բնակարաններից առանձնացնել: Քանի վոր շներն անհրաժեշտ են գյուղացիների տների պահպանման համար, պիտի ունենան իրենց հատուկ բները բնակարաններից հեռու:

Բնակարաններից հեռու պիտի շինվեն նույն պես գոմեքն ու հավաքները, վորոնց մաքրության վրա հատուկ ու խիստ հսկողություն պիտի ունենալ:

Յնային աշխատնեներ

Հակաառողջապահական պայմանները վատթարանում են, յերբ բնակարաններում կերակուր են յեփում և լվացք անում: Ծուխ, գոլորշի, կերակուրների հոտ ամենն ել ապականում են սենյակի ողը և պատճառ դառնում ընտանիքների առողջության քայլացման:

Հակաառողջապահական յերեսույթ պիտի նկատել նաև բնակարաններում շոր փոելն ու չորացնելը:

Յեթե բնակարանների պալմաններն այնպես են, վոր անհնար և նման վասակար յերեսույթներից ազատվել, այն ժամանակ միջոցների պիտի դիմել փոքրիշատե տանելի պալմաններ ստեղծել, վորպեսզի պատճառած վասը հնար յեղածին չափ պակաս լինի. որինակ՝ քուրակի վրա թիթեղյա մեծ ծածկոց շինել, վորպեսզի նրա միջոցով կերակրի և տաք ջրի բուղն ու հոտը կարելի լինի հեռացնել, վոր չապականեն սենյակի ողը և պատճառ դառնան բնակարանի խոնավության:

Եատ բնակարաններ լեց-
թեակարանների նում են ամեն տեսակի կահ-
կահավորումը կարասիներով, վորոնց մեծ
մասն ավելորդ ե գործածության համար, ինչպես,

որինակ՝ փափուկ բազմոցներն ու բազկաթոռները, զրափե վարագուլը, փորոնք մեր իրականության մեջ շատ շուտ աղտոտվում են և մեծ քանակությամբ ել փոշի վերցնում:

Մեզ մոտ բնակարանների կահավորությունը պիտի լինի շատ պարզ և բաղկացած լինի սխայն առորյա գործածության համար անհրաժեշտ պարագաներից։ Ամեն տեսակի ավելորդ իրերն ու կահարասիները պիտի հեռացնել, այլապես նըրանք խանդարում ու դժվարացնում են մաքրասեր տանտիկնոջ գործը և նվազեցնում են սենյակների ողը։

Պահարաններն ու հանդերձարանները շատ բարձր ու խոշոր չպիտի լինեն, վորպեսզի դյուրին լինի նրանց վերին մասերը մաքրել, ուր սովորաբար մեծ քանակությամբ փոշի յե նըրատում և ավելորդ լաթեր ժողովում։

Բնակարանների մաքրությունը մեծ մասամբ կախված է այն կարդ ու կանոնից,
վոր ընտանիքների անդամները մտցրել են իրենց առորյա կյանքում և խստությամբ հետեւում են ու պահպանում։ Առանց կարգ ու կանոնի անհար և առողջապահական պայմանների կիրառումը։ Եթե տան անդամները, մեծից փոքր, անեն այն, ինչ վոր ցանկանում են, որինակ՝ վե-

բարկուներն ու գլխարկները փոխանակ կախարանների վրա կախելու, սենյակներում այս ու այն կողմը շպրտեն, կամ կրկնակոշիկները միջանցքներում հանելու փոխարեն սենյակները տանեն, սենյակ մտնելուց առաջ կոշիկների ու հագուստների փոշին չմաքրեն... համոզված յեղեք, վոր շատ որինակելի տանտիկինն անգամ անկարող կինի պատշաճ մաքրության մեջ պահել իր բնակարանը։

Ամենքս պարտականություն պիտի զգանք և աշխատենք, վոր մեր բնակարաններում ամեն իր ունենա իր հատուկ տեղը։ Հակառակ պարագային մենք ինքներս խանդարած կլինենք տանտիկնոջ և դժվարացրած նրա գործը։

Հատակին թքելը կամ ծխախոտի քնթուկները այս ու այն կողմ ցըելը՝ կեղտոտություն ու վարակ են առաջ բերում սենյակներում։

Թքամանի մեջ պիտի թքել և այնտեղ ել լցնել քնթուկները։

Սենյակ մտնելուց առաջ պիտի մաքրել կոշիկները շեմքի առաջ զցած թաց շորի վրա։ Բայց վոր կարեռը ե, պիտի սովորություն դարձնել բնակարանում չծխելը։ այլապես ծխախոտի թույնով ու ծխով լցնում ենք բնակարանները և թունավորում յերեխաներին ու ընտանիքի մյուս անդամներին։

Այս տեսակետից որինակելի յեն անգլիացիները, վորոնք չեն ծխում ննջարաններում և առհասարակ այս սենյակներում, ուր տանտիկինն ու լերեխաններն են գտնվում. մինչդեռ մեզ մոտ ճիշտ հակառակն է, սովորություն և անգամ անկողնի մեջ ծխելը...

Եերբ մենք ասում ենք, թե մեր առողջության համար մաքուր պիտի պահենք մեր բնակարանները, դա վերաբերում է վոչ միայն այն սենյակներին, ուր մենք ենք ապրում, այլև ամբողջ շենքին. Մաքուր պիտի պահել սանդուխքներն, ընդհանուր միջացքները, տան բաէն ու շրջակալքը:

Յուրաքանչյուր բնակիչ մտահոգված պիտի լինի նաև հարեանների մաքրությամբ, պիտի փոխադարձ հսկողություն ունենալ և ընդհանուր ուժերով վերացնել շենքերի, բակերի ու շրջապատի հակառական պայմանները, ալլապես մի մաքրասեր ընտանիքի բոլոր ջանքերն ապարդյուն կարող են անցնել, յերբ նրա հարեաններն ու շրջապատողները կեղտի ու ապականության մեջ կորած են:

Հատկապես մաքուր պիտի պահվեն արտաքնօցները. առանձնապես ուշադրություն ու հըսկողություն պիտի ունենալ ընդհանուր և մասսայական արտաքնօցների վրա, վորովնետև շատ

հիվանդությունների վարակի աղբյուրը, ինչպես գիտենք, մարդկավին արտաթորություններն են, վորից կարելի յե գյուրությամբ վարակվել:

Մեծ շենքերում, մանավանդ կոմմունալ բնակարաններում, տնային բջիջների գոյությունն անհրաժեշտություն ե. Նրանց և վերապահվում ամբողջ շենքերի և առհասարակ բնակարանների առողջապահական պայմանների հսկողությունը: Ինչպիս բնակարանների վերանորոգումները, նույնպես և նրանց բարեկարգ ու մաքուր պահպանման հոգալ ծանրացած և տնային առբջիջների վրա: Նրանք մերթընդմերթ հաճախելու յեն բնակարանները և առողջապահական հատուկ ցուցմունքներ անելու առանձնապես անդրագետ ընտանքներին:

Բնակարանների ընդհանուր առողջացումն իրենց բնակիչների գործն ե:

III. ԱՊԱԳԱՅԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ

Գիտությունն ու տեխնիկան ձեռք-ձեռքի տված ժամանակակից առողջապահական գիտելիքների հետ, սկսել են աստիճանաբար մշակել ու կրանքի կոչել բնակարանալին անպիսի սիստեմներ, վորոնց նպատակն ե, բացի հակառակ՝ ջապահական պայմանների վերացումից, մարդ-

կային հոգեկան ու ֆիզիկական ուժերի ամրապնդումն ու զարգացումը:

Լավ, մաքուր, լուսավոր ու հարմարություններ ունեցող բնակարանները, իսկապես վոր, գվարթացնում ու թարմացնում են սեր հոգին, աշխատանքի արտակարգ յեռանգ են և երշնչում ու փոքերում:

Խորհրդագյին վողջ Միության մեջ, գլխավորապես խոշըր արդյունաբերական վայրերում, կառուզվում են հատուկ բանվորական արվարձաններ, ուր բնակաբանները հարմարեցվում են առողջապահական նոր կենցաղի պայմաններին:

Այդ արվարձանները բռնում են խոշոր տարածություններ, բնակաբանները միակերպ են, բաղկացած մեծ մասամբ 2—3 սենյակներից, իրենց խոհանոցներով ու առանձին մուտքերով:

Մեզ մոտ ևս խոշոր շինարարություն և կատարվում Յերևանում, Լենինականում, Ալլահվերդիում և Ղափանում, ուր բնակաբաններն ստանդարտ ախպի յեն, լուսառատ, մաքուր ու կոկիկ, ունեն առանձին խոհանոց ու մուտք, հարմար արտաքնոց, ելեկտրական լույս և հոլլանդական վառարաններ: Խոշոր շենքերին կից շինվում են նաև կենտրոնական վառարաններ, վորոնք հատուկ խողովակների միջով տաք գոլորշիները տանում են սենյակները և տաքացնում:

Կենտրոնական վառարաններն այն հարմարությունն ունեն, վոր չեն աղտոտում բնակարանները, ողը չեն ապահանում ծխով, բայց, վոր կարեորն ե, որ ու գիշեր սենյակների տաքության աստիճանն անփոփոխ են պահում և պատճառ չեն դառնում մրսելու և հիվանդությունների:

Իդեալական քաղաքներն ու Պարեագ-Քաղաքները բնակությունները նրանք են, վորոնք շրջապատված են այդիներով ու ծառատաններով, ուր և՛ ողն և թարմ, և՛ փոշին քիչ, չկան մեծ քաղաքների ու գործարանների ապականող ծուխն ու գաղերի հուր:

Տները շրջապատված են ծառերով, պարտեզներով ու կանաչով, փողոցները սալահատակած են ու մաքուր, զուրկ փոշուց ու կեղտից, կան բաղմաթիվ ծառապարդ ու կանաչով պատած հրապ սրակներ ու հասարակական զբուժավայրեր:

Ներկայումս պարտեզ-քաղաքներ, պարտեզ-արվարձաններ կան Ամերիկայում, Գերմանիայում, Անգլիայում. մեզ մոտ ևս վերջերս շինվում են բանվորական պարտեզ-արվարձաններ:

Առաջին պարտեզ-քաղաքը Լեչվորթն է, վորը շինված են 30 տարի առաջ և գտնվում է Լոնդոնից ընդամենը 60 վերստ հեռավորության վրա:

Մահացություններն ու հիվանդությունները, համեմատած մեծ քաղաքների հետ, Լեչվորթում չնշին են: Մինչդեռ մահացությունը կոնդոնում 1000-ին 25-ե, գերմանական քաղաքներում՝ 18, Լեչվորթում՝ 5-ից չի անցնում: Եռևնը կարելի է ասել նաև, յերեխանների մահացությունների մասին: Մի տարբա ընթացքում, յուրաքանչյուր 1000 յերեխալից Լեչվորթում մահանում են 38-ը, անդիհական քաղաքներում՝ 145, իսկ գերմանական՝ 196:

Յերևան քաղաքի նոր հաստակագիծը, վորկազմել ե ակադեմիկոս Թամանյանը, նպատակ ունի կիրառել պարտեզ-քաղաքի սկզբունքները, վորի իրականացման համար բոլոր բնական արվյալները կան: Յերևանի ողբ, սքանչելի ջուրն ու բուսականությունը, բոլորն ել հրամայաբար պահանջում են աննահանջ առաջ տանել ճարտարապետ Թամանյանի փառահեղ հղացումը:

ԼՈԶՈՒՆԳՆԵՐ

1. Բնակարանների դերը մեծ ե մեր առողջության գործում:
2. Մաքուր ու լուսառատ բնակարաններն ապահովում են մեր առողջությունը:
3. Մութ, խոնավ ու խավար բնակարանները թուլացնում են մեր որգանիզմը և յենթաթակա դարձնում հիվանդությունների:
4. Խիտ բնակարանում, ուր ապականված ե ողբ, յերեխանները լինում են նվազ, սակավաբուն ու հիվանդու:
5. Խիտ բնակարանները տալիս են մեծ մահացություններ:
6. Բնակարանների պայմանների լավանալով՝ պակասում են մահացությունները:
7. Վորագեսպի մարդկային կյանքը կանոնավոր զարգանա և առողջ լինի, մեր բնակարանները պիտի թափանցեն արեի ճառագայթներ:
8. Արեի ճառագայթները վոչնչացնում են բոլոր մնացած առաջարկություններին:
9. Լուսառատ բնակարանն ինքն առողջությունն եւ:

10. Թիթեղյա վառարանները հակառողապահական են և վասակար:

11. Առողջ բնակարանների հետ ե կապված մեր հանգիստը:

12. Լավագույն հանգիստը քունն ե.

13. Տաք ու փափուկ անկողինը հասակավորներին թուլացնում ե ու վարժեցնում մեղկության, իսկ յերեխաններին՝ ոնանիզմի:

14. Քիչ ժամանակ հագուստոն արգելք ե հանգիստում կանոնավոր շնչառության և արյան շրջանառության:

15. Հագուստով քունը վոչ միայն լրիվ չի կարող լինել, այլև նա մեզ պատճուռում ե անհանգստություն:

16. Կատարյալ ու լրիվ հանգստի համար պիտի ունենալ առանձին մահճակալ:

17. Միատեղ քնելու դիմավոր վահանգը վարկն ե.

18. Թոքախտի զարգացման գլխավոր պատճառներից մեկն ել միևնույն անկողնում կողքկողքի քնելն ե:

19. Ավելի լավ ե կանուխ արթնանալ և թարմ ողի մեջ փոքր ինչ յերկար քավել, քան թե նեխված բնակարանի ողը շնչել:

20. Կուլտուրական մարդն ամեն բանից բարձր ե դասելու ընտանիքի և մատադ սերնդի

առողջությունը. վատ բնակարանները կորստարեր են նրանց համար:

21. Ամեն քաղաքացի պիտի իմանա, վորչի կարելի նոր բնակարան տեղափոխվել, առանց նախապես մաքրելու այն:

22. Փոշին մեր առողջության համար չափանց վասակար ե և հիվանդությունների աղբյուր:

23. Թոքախտի տարածման գլխավոր պատճառներից մեկն ել փոշին ե.

24. Բնակաբանները պիտի մաքրել թաց ավելով և թաց շորով:

25. Առանց ողափոխության անհնարին և պատկերացնել առողջ բնակարան:

26. Ամառվա տաք յեղանակներին հանցագործություն ե փակ թողնել սենյակների պատուհանները:

27. Կանոնավոր ողափոխությունը վոչ միայն նորոգում ե բնակարանների թթվածինը, այլև չորացնում ե սենյակները:

28. Խոնավ բնակարանների ողափոխությունը լինելու յե հաճախակի և տևական:

29. Ողափոխությունը մեր բնակարանների առողջացման հիմքն ե կազմում. վորպես որենք՝ նա պիտի գործադրվի պարտադիր կերպով:

30. Ճանձերն ու պարագիտները լավագույն

միջնորդներն են վարակիչ հիվանդությունների տարածման:

31. Պարագիտաների դեմ լավագույն պայքարը սապոնն ու տաք ջուրն եւ:

32. Միայն սովորություն դաշըձրած մեր ամենորյա մաքրությամբ կարող կլինենք ազատվել բնակարանալին թշնամիներից — պարագիտներից:

33. Անմաքրությունը թուլացնում է մարդկային ուժերը:

34. Մեր բնական դիմացկունությունը պակասում է անմաքրությունից, և չենք կարողանում դիմացրել բնության և կյանքի դժվարություններին:

35. Ով ուզում ե լերկար ապրել, նա պիտի մաքուր ապրի:

36. Աղտոտությունները փառութեր են առաջ բերում, իսկ փառութերը մանրեների զարգացման բներն են:

37. Բնակարանների, բակերի և փողոցների մաքրումը նույնքան անհրաժեշտ է, վորքանմեր ամենորյա հացը:

38. Մաքուր ու ձանձերից անվտանգ պահել ուտելիքները՝ դա առողջապահության այբուբենն է:

39. Բնակարանում մի պահիք բնանի կեն-

դանիներ. նրանք պատճառում են հիվանդություններ:

40. Սենյակում մի յեփիք կերակուր և վոչ ել լվացք արա. ծուխը, հոտն ու գոլորշին քայքայում են մեր առողջությունը:

41. Հակառառողջապահական ու մխասակար և բնակարաններում լվացք փոեն ու չորացնելը:

42. Մեր բնակարանների կահավորությունը պիտի լինի պարզ և բաղկացած անհրաժեշտ պարագաներից:

43. Ամեն իր բնակարանում իր հատուկ տեղն է ունենալու:

44. Մի ծխիք սենյակում, աղապես գու ապականում ես ողը և թունավորում լերեխաներին:

45. Սենյակ մանելիս մաքրիք կոշիկներդ շեմքին զցած թաց շորի վրա:

46. Մի թքի հատակին, թքիք թքամանում:

47. Առանց կարգ ու կանոնի անհնար և առողջապահական կանոնների կիրառումը:

48. Բնակարանների ընդհանուր առողջացումն իրենց բնակիչների գործն է:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1. Բնակարանները յեզ մեր առողջապահու-

Բյունը . 1—32

Բնակարանները և նրանց նշանակությունը	3
Բնակարանային տագնապը Հայտստանում	6
Բնակարանը և վարակիչ հիվանդությունները	8
Բնակարանները և թոքախտը	10
Խիտ բնակություններ	12
Ողբ	13
Փոշին	16
Բնական լուսավորություն	18
Արհեստական լուսավորություն	22
Բնակարանների տաքությունը	23
Հանգիստ և քուն	28

2. Ի՞նչպես առողջացնել մեր բնակարանները 33—55

Բնակարանի ընտրությունը	33
Ի՞նչպես տեղափոխվել նոր բնակարան	34
Ի՞նչպես պիտի մաքրել սենյակները	35
Բնակարանների ողափոխությունը	38
Ննջարանները	40
Պայքար տնալին միջատների դեմ	42
Աղոտությունների հեռացումը	45
Ընտանի կենդանիներ	49
Տնային աշխատանքներ	51
Բնակարանների կահավորումը	51
Բնակարանների խնամքը	52

3. Սպագայի բնակարանները

55—58

Պարտեզ-քաղաքներ	57
---------------------------	----

4. Լոգություն

59—63

ՀՀ Ազգային գրադարան



NL0279132

2318

Д-р Казарян

Квартира и наше здоровье



ԳԻՒԸ 10 Կ.

0929-20